

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՉԱՐԱ ՍԱՄՎԵԼԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

**ԼԵԶՈՒՆ ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍԻ ՀԱՄԱՎՅՄԱՆ
ԲԱՆԱԼԻ**

Ժ.02.07 - «Ռումանագերմանական լեզուներ»
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բ.գ.դ., պրոֆեսոր
Սեդա Բերրբի Գասպարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բ.գ.դ., պրոֆեսոր
Արեգա Միքայելի Հակոբյանց
բ.գ.թ., դոցենտ
Կարեն Արմիկի Վեյսան

Առաջատար կազմակերպություն՝

Հայ-ռուսական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի հոկտեմբերի 21-ին՝ ժամը 11-ին ՀՀ ԲԿԳԿ-ի Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026 թվականի սեպտեմբերի 19-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
բ.գ.դ., պրոֆեսոր՝



Գայանե Մուրադյան

Սույն ատենախոսության **նպատակն** է՝ բացահայտել մեղադրողների և պաշտպանների (այսուհետ՝ կողմերի) դատական ելույթներում լեզվական ու հռետորական միջոցների կիրառման առանձնահատկությունները և ուսումնասիրել, թե ինչպես են դրանք իրենց ներուժով օգտագործվում երդվյալ ատենակալների աջակցությունը շահելու համար: Լեզվի գործածության վերլուծության միջոցով ուսումնասիրությունը խնդիր է դրել պարզել, թե ինչպես են կողմերը հմտորեն կառուցում համոզիչ դիսկուրս՝ ընդունակ ազդեցություն գործելու դատավորների և երդվյալ ատենակալների վրա կոնկրետ դատական գործերի համատեքստում: Միևնույն ժամանակ, հետազոտությունը դիտարկում է նաև առանց երդվյալ ատենակալների մասնակցության իրականացվող դատավարություն՝ հնարավորություն տալով համեմատական տեսանկյունից վերլուծել, թե ինչպես են հռետորական և լեզվական միջոցները գործում միջազգային դատական միջավայրում: Հետազոտության նպատակն իրականացված է հետևյալ **խնդիրների** ուսումնասիրության ճանապարհով.

- համադրել իրավական դիսկուրսի և համոզման հռետորաբանության ուսումնասիրության արդի տեսական մոտեցումները՝ ձևավորելով վերլուծական շրջանակ, որը թույլ կտա սահմանազատել փաստաբանների դատական ելույթների կառուցվածքային բաղադրիչները,
- ուսումնասիրել կողմերի ելույթները բազմամակարդակ լեզվաբանական վերլուծության շրջանակում՝ ներկայացնելով դրանց ձևաբանական-շարահյուսական, ոճական ու հռետորական առանձնահատկությունները և բացահայտել, թե ինչ դեր են խաղում արտահայտչական տարաբնույթ միջոցները իրավական փաստարկման մեջ,
- որոշարկել վերհանված հռետորական և ոճական միջոցների հանախականությունն ու բաշխվածությունը կողմերի հակադիր ելույթներում՝ իրականացնելով տարբեր դատական գործերի համեմատական վերլուծություն,
- գնահատել լսարանի և ինստիտուցիոնալ միջավայրի ազդեցությունը իրավական համոզման գործընթացի վրա՝ համեմատելով կողմերի հռետորական ու լեզվական ռազմավարությունները երդվյալ ատենակալների և պրոֆեսիոնալ դատավորների ներկայությամբ:

Սույն հետազոտությունը խիստ **արդիական** է, քանի որ հանցագործությունների ամենօրյա մակարդակը շարունակում է բարձր մնալ, իսկ սա անխուսափելիորեն հանգեցնում է ինչպես արդարացի, այնպես էլ անարդարացի դատավճիռների կայացման: Ուսումնասիրությունը չի անդադառնում անարդարացի դատապարտման խնդրին, այլ բացահայտում է, թե ինչպես են կողմերը կառուցում իրենց փաստարկները, որը ցանկացած դատավճիռի կայացման կարևորագույն պայմաններից է: Այս առումով՝ կարևոր է ուսումնասիրել դատարանում կողմերի կիրառած լեզուն՝ անկախ նրանից, աջակցում են նրանք իրենց պաշտպանյալին, թե հակադրվում մյուս կողմին, ինչպես նաև բացահայտել դրա օգտագործման ձևերը՝ առավել արդյունավետ ազդեցություն ապահովելու նպատակով:

Սույն հետազոտության նորույթը հիմնավորվում է իրավական համոզման (persuasion) շուրջ առկա գիտական մոտեցումների և եռակողմ մեթոդաբանական քննության համադրմամբ. ժամանակակից անգլալեզու դատական ելույթների համեմատական կորպուս, որտեղ յուրաքանչյուր դատավարության երկու հակադիր կողմերի ելույթները համեմատվում են միմյանց հետ, Միջազգային դատարանում քննված հայկական համատեքստ ունեցող գործի վերլուծություն, ինչպես նաև միասնական հռետորական և լեզվաոճական վերլուծության շրջանակ: Այսպիսով, ուսումնասիրությունը նպատակաուղղված է պարզելու, թե լեզվական և հռետորական ինչ միջոցներ են կիրառվում այս ելույթներում, և թե ինչպես են յուրաքանչյուր դատավարության երկու հակադիր կողմերը կառուցում իրենց մրցակցային մեկնաբանությունները նույն փաստերի վերաբերյալ:

Հետազոտության **տեսական նշանակությունը** պայմանավորված է նրանով, որ ստացված արդյունքները կարող են նպաստել իրավական դիսկուրսի, դատական հռետորաբանության և լեզվաբանության ուսումնասիրության տեսական հիմքերի ընդլայնմանը, զարգացմանն ու հարստացմանը: Դրանք կարող են հետաքրքրություն ներկայացնել նաև վերոնշյալ գիտակարգերում իրականացվող հետազա հետազոտությունների համար՝ հնարավորություն տալով վերաիմաստավորել և վերագնահատել ստացված տվյալներն ու եզրահանգումները:

Հետազոտության **գործնական արժեքը** պայմանավորված է այն փաստով, որ սույն ուսումնասիրության արդյունքները կարող են կիրառվել իրավական դիսկուրսի վերլուծության և իրավական հաղորդակցության ոլորտի մասնագետների կողմից, ինչպես նաև օգտագործվել իրավական հռետորաբանությանը, դատական խոսքին և համոզիչ հաղորդակցությանը նվիրված տեսական ու գործնական դասընթացներում: Ստացված արդյունքները կարող են նպաստել նաև ապագա գիտական հետազոտությունների, մասնավորապես՝ դոկտորական ու թեկնածուական ատենախոսությունների, մագիստրոսական թեզերի և դիպլոմային ուսումնասիրությունների հետազա զարգացմանը, ինչպես նաև ներառվել իրավագիտության գործնական ուղղվածության ուսումնական դասընթացներում:

Սույն հետազոտության **մեթոդաբանությունը** հիմնված է մի շարք որակական մեթոդների համակցված կիրառման վրա, ներառյալ՝ բառիմաստային, լեզվաոճական, ձևաբանական-շարահյուսական, հռետորաբանական և դիսկուրսային վերլուծությունները: Դատական ելույթներում կիրառվող լեզվական ռազմավարությունները և համոզիչ փաստարկները լրացուցիչ ուսումնասիրվել են քանակական մոտեցման կիրառմամբ: Յուրաքանչյուր դատական գործում հաշվարկված բառային միավորներն առանձնացված են երկու կողմերի ելույթների միասնական կորպուսից, այլ ոչ թե յուրաքանչյուր կողմի ելույթներից առանձին վերցված, ուստի ներկայացված տարբերությունները ոչ թե բառերի ընտրության ձևի հետևանք են, այլ՝ վերլուծության արդյունքներ: Քանի որ յուրաքանչյուր դատավարությունում վիճարկվող փաստերը տարբեր են, բառային չափանիշները հատուկ են տվյալ դատական գործին և համեմատվում են, համապատասխանաբար, ոչ թե տարբեր գործերի, այլ կոնկրետ գործի ներսում, որտեղ երկու կողմերի ելույթներն անդրադառնում են միևնույն իրադարձություններին և ներկայացվում են նույն դատարանի առջև: Չափանիշներից

երկուսը՝ ուղղակի խոսքը և հռետորական հարցերը/հիպոֆորան, որոնք ունեն կառուցվածքային, այլ ոչ թե բառային բնույթ և բոլոր չորս դատավարություններում հաշվարկվում են նույն սկզբունքով, համեմատվում են միմյանց հետ նաև մյուս դատական գործերի շրջանակներում՝ պայմանով, որ նույն տեսակի ելույթները հակադրված են մեկը մյուսին: Արցախի վերաբերյալ դատավարությունը ներպետական դատավարություններից տարբերվում է ոչ միայն լսարանի կազմով, այլև խոսքի մատուցման ձևով, ժանրով ու ելույթ ունեցողի դերով, ուստի ներկայացված ուսումնասիրության մեջ այս գործոնները հնարավոր չէ լիովին տարանջատել միմյանցից:

Մեր հետազոտության **ոլորտը** ներառում է հետևյալ գիտակարգերը՝ դիսկուրսի վերլուծություն, ոճաբանություն, իրավական դիսկուրս և հռետորաբանություն:

Սույն ատենախոսության հետազոտական **նյութը** վերցված են ԱՄՆ-ի իրական քրեական դատական գործերից և Արդարադատության միջազգային դատարանում քննված մեկ գործից, որոնք հիմք են հանդիսանում հետագա բոլոր վերլուծությունների համար: Ներպետական դատավարության երեք գործերն ընտրվել են ըստ երդվյալ ատենակալների մասնակցության սկզբունքի, ինչպես նաև այն պատճառով, որ ելույթների ամբողջական տեսագրությունները հասանելի են հանրությանը: Նյութը ներառում է Դերեկ Շովինի և Քվանիշա Ջոնսոնի դատավարությունների բացման խոսքերը և եզրափակիչ ելույթները, Արդարադատության միջազգային դատարանում Հայաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչների բանավոր դատալսումները, ինչպես նաև «Սև կարապ» դատավարության եզրափակիչ ելույթները: Ելույթների տեքստերը ձեռքով վերծանվել են համապատասխան դատավարությունների՝ հանրությանը հասանելի տեսագրություններից: Արցախի գործի պաշտոնական տեքստը հասանելի է, ուստի տվյալ դատավարության համար ձեռքով վերծանում չի իրականացվել: Յուրաքանչյուր ելույթի բառաքանակը ներկայացված է 2-րդ գլխի աղյուսակներում:

Հատկանշական է, որ Արդարադատության միջազգային դատարանում քննվող Արցախի գործը՝ ընտրված նախագահի նախագահությամբ վարվող պաշտոնական դատավարություն է, որը ստեղծում է ակնհայտ հակադրություն ներպետական դատավարությունների մոդելների հետ. Երդվյալ ատենակալների փոխարեն դատին մասնակցում է պրոֆեսիոնալ դատավորների կազմ: Արցախի գործն ընտրվել է ոչ միայն Հայաստանի համար իր խորը արդիականության, այլև այն պատճառով, որ հնարավորություն է տալիս վերլուծելու, թե ինչպես են իրավական դաշտի ներկայացուցիչները փաստարկներ կառուցում միջազգային հարթակում, որտեղ համոզումն ուղղված է բացառապես դատավորներին, այլ ոչ թե դատավորների և երդվյալ ատենակալների համակցված կազմին: Այս տարբերակումը թույլ է տալիս առավել խորն ուսումնասիրել լսարանի, ինստիտուցիոնալ միջավայրի և հռետորական ընտրության փոխկապակցվածությունը: Դատական տարբեր համակարգերում իրավական դիսկուրսի համեմատական վերլուծության հնարավորություն ընձեռելով՝ Արցախի գործն ընդլայնում է սույն հետազոտության շրջանակը: Այն հիմք է ստեղծում ուսումնասիրելու, թե արդյոք համանման համոզման ռազմավարությունները, հռետորական միջոցներն ու լեզվական օրինաչափությունները դրսևորվում են ոչ միայն ներպետական քրեական դատավարություններում, այլև միջազգային դատական գործընթացներում՝ չնայած իրավական ավանդույթների, ինստիտուցիոնալ կառուցվածքների և հաղորդակցական

նպատակների էական տարբերություններին: Վերջիվերջո, այս համեմատությունը հնարավորություն է տալիս բացահայտելու իրավական հիմնավորման ինչպես համընդհանուր, այնպես էլ համատեքստին հատուկ առանձնահատկությունները:

Հետազոտության **վարկածն այն է**, որ թեև ավանդաբար իրավական դիսկուրսը բնութագրվում է որպես պաշտոնական, անանձնական և հուզականորեն չեզոք, այս նկարագիրը չի համապատասխանում կողմերի դատական ելույթներին, որոնցում հուզարտահայտչականորեն երանգավորված լեզուն մշտական հատկանիշ է: Նման հռետորական և ռճական գունավորումը չի վերանում ո՛չ պաշտոնական միջավայրի, ո՛չ էլ լսարանի մասնագիտական բնույթի պայմաններում: Երբ կողմերը դիմում են դատավորներին, այլ ոչ թե երդվալ ատենակալներին, այդ գունավորումը դառնում է ավելի թույլ և արտահայտվում է այլ ձևերով՝ հուզական բառապաշարի փոխարեն դրսևորվելով անվանակոչման, եղանակավորման և սաստկացման միջոցներով:

Սույն ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, ծանոթագրություններից, եզրակացությունից, գրականության ցանկից, էլեկտրոնային և բառարանագրական աղբյուրներից: Ներածության մեջ հիմնավորված է թեմայի ընտրությունը, ներկայացված են հետազոտության նպատակն ու խնդիրները, արդիականությունը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, մեթոդաբանությունը, ուսումնասիրության ոլորտը, նյութը և վարկածը, ինչպես նաև յուսաբանված են աշխատանքի առանցքային հարցադրումները:

Առաջին գլուխը՝ «Իրավական դիսկուրսի և հռետորաբանության տեսական հիմքերը» վերնագրով, իր հերթին բաղկացած է չորս ենթագլխից և ունի տեսական բնույթ. այստեղ ներկայացված են ընդհանուր տեղեկություններ դիսկուրսի, իրավական դիսկուրսի և դատական լեզվաբանության մասին՝ շեշտադրելով դատական ելույթների և դրանցում գործածվող լեզվի ուսումնասիրության տարբեր տեսություններն ու մոտեցումները՝ հաշվի առնելով իրավական դիսկուրսի բազմազան հայեցակերպերը: Առանձնակի ուշադրություն դարձնելով այդ ելույթների վերլուծության մեջ կիրառվող մեթոդներին, քննված են կողմերի ելույթներում համոզիչ խոսքի մատուցմանը ներհատուկ գծերը և ուսումնասիրված դրանցում գործածվող հռետորական ու համոզման ռազմավարությունները:

Երկրորդ գլուխը՝ «Լեզվական ու հռետորական ռազմավարությունները դատական ելույթներում» վերնագրով, հետազոտության գործնական մասն է և նվիրված է կողմերի ելույթների վերլուծությանը՝ լեզվի հետևյալ հայեցակերպերում.

- գործածված բառապաշար,
- ձևաբանական և շարահյուսական առանձնահատկություններ,
- լեզվառճական հնարների կիրառություն,
- հռետորական և համոզման միջոցներ:

Հենվելով լեզվի և խոսքի՝ Սոյուրիի առաջադրած տարբերակման վրա, վան Դայքը (1985)¹ դիսկուրսը սահմանում է որպես խոսքի միավոր, այսինքն՝ արտաբերված տեքստ,

¹ Van Dijk, T. A. (1985). *Discourse and Communication. Research in Text Theory*. Berlin: Walter de Gruyter, 367 p.

մինչդեռ տեքստը նրա համար ասույթի վերացական քերականական կառուցվածքն է, որը նյութականացնում է լեզվական համակարգը:

Ըստ Ջիի (1999)² դիսկուրսը մեկնաբանվում է երկու տարբեր ձևերով. մեծատառով «Դիսկուրս» եզրույթը գործածվում է ինքնաներկայացումների միջոցով սեփական ինքնությունը սահմանելու համար, իսկ փոքրատառով «դիսկուրս»-ը՝ այն դեպքերում, երբ նկատի ունի «գործածության մեջ գտնվող լեզուն կամ պարզապես լեզվական հատվածները»:

Ֆեյրքլաֆը (1989)³ իրավական դիսուրսին մոտենում է քննադատորեն. իրավական դիսկուրսը ոչ միայն արտացոլում է աշխարհն այնպես, ինչպես կա, այլև ակտիվ դեր է կատարում հեղինակության, լեզիտիմության և ինստիտուցիոնալ իշխանության կառուցման ու ամրապնդման գործում:

Ս. Գասպարյանի և ուրիշների (2019)⁴ կարծիքով «Իրավական լեզուն համարվում է պաշտոնական ոճի ենթաոճ, և լեզվի այլ ոճերի նման, ունի հստակ հաղորդակցական նպատակ և փոխկապակցված լեզվական ու ոճական միջոցների սեփական համակարգ»:

Տեսական մասում նաև անդրադարձ է կատարվում դատական ելույթների առանձնահատկություններին: Թիրամայի (1999)⁵ դիտարկումների համաձայն, կրավորական կառույցների գործածությունը, որը հաճախ ռազմավարական նպատակներով հանդես է գալիս կողմերի ելույթներում, ունկնդիրների ուշադրությունը շեղում է գործող անձից:

Ոճագիտության մեջ ուսումնասիրվող միջոցներից կրկնությունը, հոետորական հարցը և հիպոֆորան, կողմերի խոսքի էական բաղադրիչներն են, որոնք միտված են շարադրելու այս կամ այն դրույթը կամ որոշակի միտք հաղորդելու: Կողմերի ելույթներում ուշագրավ է ուղղակի և անուղղակի խոսքի, ինչպես նաև ժամանակաձևերի գործածությունը, որոնց օգնությամբ նրանք ունկնդիրներին են ներկայացնում դեպքերի ընթացքը:

Երկրորդ գլխում ներկայացված է տեսական մասում մշակված վերլուծական շրջանակի հետևողական կիրառումը չորս դատական գործերի նյութերի և դրանց քանակական վերլուծություն հիման վրա: Համեմատությունը կատարված է յուրաքանչյուր գործի ներսում՝ միևնույն ատյանի առջև նույն դեպքերի շուրջ հնչած երկու հակադիր կողմերի ելույթների միջև, իսկ գործերի միջև այնպիսի կառուցվածքային չափորոշիչներով, ինչպիսիք են ուղղակի խոսքը և հոետորական հարցերն ու հիպոֆորան, որոնք հաշվարկված են միևնույն չափանիշներով բոլոր չորս վարույթներում: Բոլոր ցուցանիշները նորմավորված են ըստ հազար բառի հաշվարկի, քանի որ ելույթների ծավալները զգալիորեն տարբերվում են:

² Gee, J. P. (1999). *An Introduction to Discourse Analysis: Theory and Method.* : London: Routledge, 176 p.

³ Fairclough, N. (1989). *Language and Power.* London: Longman, 259 p.

⁴ Gasparian, S., Paronyan, Sh. and Muradyan, G. (2019). *The Use and Abuse of Language in the Legal Domain.* Montreal, Arod Books, 218 p.

⁵ Tiersma, P. M. (1999). *Legal Language.* Chicago: University of Chicago Press, 314 p.

2.1. «Դեպքի ուսումնասիրություն I. Դերեկ Շովինի դատավարությունը» ենթագլխում Ջորջ Ֆլոյդի մահվան գործով բացման խոսն⁶ ուսումնասիրված է համեմատական վերլուծության տեսանկյունից՝ դատախազ Ջերի Բլեքուելի (7710 բառ) և պաշտպան Էրիկ Նելսոնի (3106 բառ) խոսքերի հիման վրա: Ձևաբանական-շարահյուսական վերլուծությունը ցույց է տալիս, որ երկու ելույթներում էլ գերակշռում են բարդ համադասական, բարդ ստորադասական և խառը կառույցները, մինչդեռ սակավաթիվ պարզ նախադասությունները թիրախային կերպով շեշտադրում են առանձին փաստեր:

Պաշտպանի ելույթի կառուցվածքային առանցքը *reasonable doubt* (ողջամիտ կասկած), եզրույթն է, ինչպես նաև *common sense* (առողջ դատողություն) և *evidence* (պայացույց) միավորները: Ցույց է տրված, որ դրանց չափազանց հաճախակի օգտագործումը վերածվում է անհարմար կրկնության (*awkward repetition*) և, ի վերջո, նվազեցնում ելույթի կշիռը:

Դատախազի ելույթը կառուցված է արիստոտելյան կաղապարով՝ էթոսից անցում պաթոսի, ապա լոգոսի և կրկին պաթոսի: Լեզվաոճական առումով առանձնանում են փոխաբերությունը՝ *life was squeezed out of him* (կյանքը ճզմվելով դուրս հանվեց իրենից), հեգնանքը՝ *sunglasses remain undisturbed on his head* (սակնոցներն անշարժ մնում են գլխին), գուգահեռականությունն ու ռիթմիկ կրկնությունը՝ *does not get up, does not let up; knee on the neck, knee on the back* (չի վեր կենում, ճնշումը չի թուլացնում, ծունկը՝ պարանոցին, ծունկը՝ մեջքին), ինչպես նաև տուժողի խոսքի ուղղակի մեջբերումները, որոնք հասնում են պաթոսի գագաթնակետին: Հակադիր ռազմավարությունների բախումն առավել ցայտուն է ժամանակային առումով. դատախազի ողջ ելույթի առանցքում սպանության 9 *րոպե* 29 *վայրկյան* տևողության խնդիրն է, մինչդեռ պաշտպանը ձգտում է նվազեցնել դրա կարևորությունը:

Համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ առավելագույն քանակով գործածվող միավորները իրավական բնույթ ունեն: Այդպիսիք են, օրինակ, *you will see, you will hear* և *you will learn* (կոեսենք, կլսեք, կիմանաք): Դատավարական կամ իրավական-իմացական բառային միավորներ երկու կողմերն էլ գործածում են, մինչդեռ հռետորական հարցերը/հիպոֆորան և ուղղակի խոսքը առավել հաճախ են կիրառվում պաշտպանի խոսքում, քան դատախազի:

2.2. «Դեպքի ուսումնասիրություն II. Բվանիշա Ջոնսոնի դատավարությունը» գործի վերլուծությամբ պարզվում է, որ նույն դեպքը երկու կողմերը ներկայացնում են միանգամայն հակադիր պատումներով, և այդ հակադրությունն իրականացվում է առաջին հերթին քերականորեն. դատախազն ընտրում է ներկա ժամանակը *she's out all night, she's clubbing* (ամբողջ գիշերը դրսում է, ակումբներում է), որով մեղադրյալի վարքագիծը բնութագրվում է որպես սովորության և շարունակական, մինչդեռ պաշտպանն անցնում է անցյալ ժամանակաձևերին՝ ընդգծելով, որ գործողությունն ավարտված է և եզակի:

Լեզվաոճական մակարդակում առանձնանում է անաֆորայի գործածությունը. պաշտպանի խոսքում կրկնվում են *she was left defenseless by police officers who knew better*

⁶ Washington Post (2021, March 29). Derek Chauvin trial begins with opening statements and first witnesses - 3/29 (Full Live Stream) [Video]. YouTube. Retrieved September 16, 2022 from <https://www.youtube.com/watch?v=IWbA2brcEbgt&t=11774s>

(նա անպաշտպան էր մնացել ոստիկանների կողմից, ովքեր ավելի լավ էին տիրապետում իրավիճակին, պետք է այլ կերպ վարվեին) արտահայտությունը, *calls the police. Calls 911 (զանգահարում է ոստիկանություն: Չանգահարում է ոստիկանություն: Չանգահարում է 911)* կրկնությունը, ինչպես նաև *I didn't have to (պարտավոր չէի)* և *I wanted you to (ուզում էի, որ դուք)* կառույցները, իսկ դատախազի եզրափակիչ ելույթում *he (նա)* դերանվան անաֆորիկ կրկնությունը, որով տուժողը վերամարդկայնացվում է ի հակադրումն պաշտպանի *serial abuser (սերիալական բռնարար)* բնութագրման: Ուշագրավ են փոխաբերությունները, օրինակ, *background noise (ֆոնալիս աղմուկ)* արտահայտությունը, որով դատախազը փորձում է չեզոքացնել պաշտպանության ներկայացրած ողջ նախապատմությունը, ինչպես նաև պաշտպանի կողմից ինքնուրույն կերտված *search for semantics – search for the truth (խնաստի փնտրույք – ճշմարտության որոնում)* հակադրությունը, որը բառարաններում չհաստատված նորակազմություն է: *Reasonable doubt (ողջամիտ կասկած)* տերմինաբանական արտահայտությունը դատախազը բացատրում է պատռված մեկդուարանոցի համանմանությամբ, ինչը գնահատվում է որպես տրամաբանորեն խոցելի քայլ, քանի որ այն երդվյալ ատենակալներին հրավիրում է վճիռ կայացնելու՝ գործի թերի մասերի պայմաններում՝ *So, there's pieces missing (Կյայիսով, թերի մասեր կան):*

Ելույթների քանակական համեմատությունը բացահայտում է աշխատանքի ամենաուշագրավ արդյունքներից մեկը. դատախազի հակադարձ ելույթը՝ գրանցված գրեթե բոլոր չափորոշիչներով վարույթի հռետորական առումով ամենախիտ հատվածն է. ուղղակի խոսք՝ 15,3, հռետորական հարցեր և հիպոֆորա՝ 11,2 անգամ, ըստ հազար բառի հաշվարկի: Սա թույլ է տալիս պնդելու, որ դատախազի վերջին հակադարձ խոսքը միաժամանակ նաև ամենամշակվածն է: Ուշագրավ է նաև հետևյալ բառերի բաշխումը. հիմնավորում և պաշտպանություն արտահայտող միավորները՝ *self-defense, defenseless, protect, plead (ինքնապաշտպանություն, անպաշտպան, պաշտպանել, աղերսել)* խտանում են պաշտպանի խոսքերում (8,0 և 6,5 անգամ), իսկ իրավական հիմնավորում արտահայտող միավորները կողմերի եզրափակիչ ելույթներում (14,9 և 13,3 անգամ): Առանձին ուշադրության է արժանի *bye (հաշող)* բառը՝ որպես մեղադրյալի խոսքից մեջբերվող դրդիչ, որը հանդիպում է բացառապես դատախազների ելույթներում:

2.3. «Դեպքի ուսումնասիրություն III. Միջազգային իրավունքը և աշխարհաքաղաքական հակամարտությունը (Արցախի գործը)» ենթագլուխը նվիրված է Արդարադատության միջազգային դատարանում 2023թ. հոկտեմբերի 12-ին լսված «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի կիրառում (Հայաստանն ընդդեմ Ադրբեյջանի)» գործի վերլուծությանը: Համեմատվում են Ադրբեյջանի ներկայացուցիչ Էլնուր Մամեդովի և Հայաստանի ներկայացուցիչ Եդիշ Կիրակոսյանի ելույթները: Այս գործի ընդգրկումը հետազոտության մեջ սկզբունքային նշանակություն ունի. այն կատարում է ստուգիչ նմուշի դեր և թույլ է տալիս պարզելու, թե ինչպես են փոխվում համոզման ռազմավարությունները, երբ հասցեատերը ոչ թե ոչ-պրոֆեսիոնալ երդվյալ ատենակալներն են, այլ պրոֆեսիոնալ դատավորները:

Ադրբեջանական կողմի ելույթում (International Court of Justice, October 12, 4 p.m. 2023)⁷ առանձնացվում է շահարկման տեխնիկաների մի ամբողջ համակարգ՝ անվանման ռազմավարությունը՝ *Garabagh Economic Region of Azerbaijan, Azerbaijan's sovereign territory* (*Ադրբեջանի Ղարաբաղի տնտեսական տարածաշրջան, Ադրբեջանի ինքնիշխան տարածք*), որով տարածքային պատկանելությունը ներկայացվում է որպես ինքնին հասկանալի նախադրույթ, ռազմական գործողության վերանվանումը՝ *counter-terrorism operation* (*հակահարկելական գործողություն*), ինչով հակառակորդ կողմին անուղղակիորեն վերագրվում է ահաբեկչության պիտակը, զուգահեռ կառույցը՝ *has not engaged, and will not engage* (*չի ներգրավվել և չի ներգրավվի*), որը խոսքը դարձնում է հիշվող, հեղինակությանն ուղղված վկայակոչումը՝ *United Nations missions* (*ՄԱԿ-ի առաքելություններ*), *President's official statements* (*նախագահի պաշտոնական հայտարարություններ*), ինչպես նաև քերականական սեռի հետևողական ընտրությունը. ներգործական ամրապնդում է Ադրբեջանի սեփական դրական գործողությունները, մինչդեռ կրավորականը՝ *their human rights are protected, have been used* (*նրանց մարդկային իրավունքները պաշտպանված են, օգտագործվել են*) քողարկում է գործողին:

Հայկական կողմի ելույթը (International Court of Justice, October 12, 2023, 10 a.m.)⁸ կառուցված է այլ սկզբունքով: Այն սկսվում է հեղինակություն հաստատող խոսքով *Less than nine months ago, I stood at this podium and warned* (*Քեռևս չորս ինն ամիս առաջ, ես կանգնեցի այս ամբիոնի մոտ և գգուշացրի*), որով խոսողը հիշեցնում է իր նախկին նախագգուշացումը և անուղղակիորեն արձանագրում միջազգային հանրության անտարբերությունը: Ելույթում առանձնանում են դատարանի նախագահին ուղղված անմիջական դիմումները, հեգնանքը՝ ուղղված հակառակորդի հաշտեցման խոստումներին, հռետորական հարցը՝ *If this is not ethnic cleansing, Madam President, I do not know what it is* (*Եթե սա էթնիկ զտում չէ, տիկին նախագահ, ապա չգիտեմ ինչ է*), անորոշ դերբայի անաֆորիկ կրկնությունը՝ *to prevent... to safeguard... to protect...* (*կանխարգելել... պահպանել... պաշտպանել*), որով աստիճանաբար սաստկանում է իրադրության հրատապությունը, պայմանական կառույցը՝ որպես նախագգուշացում, և *shall* (*պարտավոր է*) եղանակիչով ձևակերպված պահանջները, որոնք ելույթին հաղորդում են հրամայական հնչեղություն:

Քանակական տվյալները ճշգրիտ համեմատության համար ներկայացվում են ըստ մեր կողմից հաշվարկված բառաքանակների թե՛ բացարձակ արտահայտությամբ, և թե՛ հազար բառին ընկնող հաշվարկով: Պարոն Մամեդովն իր ելույթում գործածել է 3790 բառ, մինչդեռ պարոն Կիրակոսյանը՝ ընդամենը 1534: Ո՛չ պարոն Մամեդովը, ո՛չ պարոն Կիրակոսյանը մեծ քանակով բացասական հարանշանակություն կամ աֆեկտ կրող բառամիավորներ չեն կիրառել: Պարոն Կիրակոսյանի ելույթում հուզական բառեր չկան,

⁷ International Court of Justice. (October 12, 2023). Application of the International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination (Armenia v. Azerbaijan). Public sitting held on Thursday 12 October 2023, at 4 p.m., at the Peace Palace. The Hague. Retrieved on March 15, 2024 from <https://www.icj-cij.org/sites/default/files/case-related/180/180-20231012-ora-02-00-bi.pdf>

⁸ International Court of Justice. (October 12, 2023). Application of the International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination (Armenia v. Azerbaijan). Public sitting held on Thursday 12 October 2023, at 10 a.m., at the Peace Palace. The Hague. Retrieved on March 15, 2024 from <https://www.icj-cij.org/sites/default/files/case-related/180/180-20231012-ora-01-00-bi.pdf>

բացառությամբ ազգին հասցվող վնասը ներկայացնող բառերի, ինչպիսիք են՝ *ethnic cleansing, protect and destroy* (էթնիկ զտում, պաշտպանել, ոչնչացնել): Պարոն Կիրակոսյանն այս դեպքում ավելի հետևողական է իրավական և պաշտոնական ոճի կիրառության հարցում: Նա հաշվի է առնում դատարանի տեսակը և վարույթի բնույթը, մինչդեռ պարոն Մամեդովը, թեև պահպանում է խիստ պաշտոնականությունը, իր ելույթում կիրառում է ավելի շատ ոճական և հռետորական հնարներ:

Ամփոփելով Արցախյան հակամարտությանն առնչվող ելույթների վերլուծությունը՝ կարելի է նկատել, որ ձևաբանական-շարահյուսական տեսանկյունից երկու ներկայացուցիչների ելույթներում էլ առատ են բարդ ստորադասական և համադասական նախադասությունները, որով պահպանվում է իրավական խոսույթին բնորոշ պաշտոնական տոնը և բառապաշարը: Երդվյալ ատենականների մասնակցությամբ դատավարությունների հետ համեմատությունը ցույց է տալիս, որ այս դեպքում ոճական միջոցները ոչ թե լիովին անհետանում են պրոֆեսիոնալ դատավորների առջև ներկայացված ելույթներում, այլ կիրառվում են ավելի զուսպ ձևով:

2.4. «Դեպքի ուսումնասիրություն IV. «Սև կարապի» դատավարությունը»: Էշլի Բենեֆիլդի գործով եզրափակիչ ելույթների (Court TV, July 31, 2024)⁹ վերլուծության առանցքում կրկնության երևույթն է: Ուսումնասիրվում են դատախազ Սյուզան Օ'Դոնելի (5828 բառ) և պաշտպան Նիլ Թեյլորի (7057 բառ) եզրափակիչ ելույթները: Պարզվում է, որ միևնույն բանալի բառը երկու կողմի ելույթներում էլ գործածվում է, սակայն հակադիր ուղղվածությամբ. Դատախազի խոսքում գերակայում է ժխտողական կրկնությունը. *There is no physical violence... There is no sexual violence* (Ֆիզիկական բռնություն չկա... Սեռական բռնություն չկա...) արտահայտությունները ցույց են տալիս բռնության բացակայությունը՝ դրանով իսկ հերքելով ինքնապաշտպանության վարկածը, մինչդեռ պաշտպանը նույն բառը կապում է տուժողի վարքագծի հետ:

Դատախազի ելույթի բնութագրական հնարներն են *did not have to* (ստիպված չէր) եղանակավորման իմաստ արտահայտող կրկնությունը, հեզմանքն ու ծաղրը՝ արտահայտված *crying hysterically* (հիստերիկ լաց լինելով) ձևակերպմամբ, կցուրդը (anadiplosis)՝ *this room. This room...* (այս սենյակը: Այս սենյակը...), ինչպես նաև *kill* (սպանել) և *murder* (սպոյինաբար և չարամտորեն սպանություն գործել) բառերի իմաստային տարբերության վրա հիմնված որակումը, որով հանցագործությանը վերագրվում է դիտավորություն, և *murder weapon* (սպանության զենքը) բառակապակցության շեշտված գործածությունը չեզոք՝ *gun* (ստորնակ) կամ *firearm* (հրազեն) տարբերակների փոխարեն: Պաշտպանի ելույթում առանցքային են *check your notes* (ստուգեք ձեր գրառումները) հրահանգի տասնապատիկ կրկնությունը՝ որպես վստահելիության և ստուգելիության հնարանը, *reasonable doubt* (ողջամիտ կասկած) իրավական տերմինի տասնվեցապատիկ գործածությունը, եղանակիչների կիրառությունը՝ *not you can..., you must* (ոչ թե կարող ես... պարտավոր ես), ինչպես նաև սեռի հետևողական ընտրությունը. տուժողի բռնի գործողությունները ներկայացվում են ներգործական սեռով՝ *Doug Benefield shoots a gun* (Դազ Բենեֆիլդը կրակում է ստորնակակով), իսկ մեղադրյալի կրակոցը՝ կրավորականով՝ *he*

⁹ Court TV (2024, July 31). Closing Arguments: Black Swan Murder Trial | FL v Ashley Benefield. [Video]. YouTube. Retrieved January 10, 2025 from <https://www.youtube.com/watch?v=fPgI27sFVQI&t=5154s>

was shot (*նրան կրակեցին*), որի շնորհիվ գործող անձը հեռացվում է շարադրանքից, և սպանությունը ներկայացվում է որպես միջադեպ, այլ ոչ թե հանցագործություն:

Այս գործի քանակական վերլուծությունը ցույց է տալիս, որ երկու կողմերն էլ իրենց ելույթներում գործածում են նույն բառերը տարբեր տեսանկյուններից՝ երդվյալ ատենակալներին իրենց կողմը գրավելու համար: *Shoot/shot/shooting* (*Կրակել/կրակեց/կրակելով*) բառերի կիրառության թվերի տարբերությունը նշանակալի է, քանի որ պաշտպանի խոսքում դրանք գերակայում են: Այնուամենայնիվ, պաշտպանը նախ կենտրոնանում է տուժողի կրակելու նախկին դեպքի վրա՝ հետազայում անդրադառնալով այդ փաստին՝ առանց գործող անձի հիշատակման: Դրանով նա հեռացնում է մեղադրյալին գործողությունը կատարողի կարգավիճակից: Այս ամենն արվում է որոշակի միտումով՝ երդվյալ ատենակալներին ցույց տալու համար, որ տուժողն ըստ էության բռնության փաստեր է արձանագրել անցյալում, և տվյալ դեպքի շրջանակում նրա կատարած գործողությունները պետք է առանցքային լինեն՝ ինքնապաշտպանության փաստարկը հիմնավորելու համար:

Ներկա գործում երկու կողմերի ելույթներում էլ առկա է ուղղակի խոսքի և հռետորական/ հիպոֆորիկ հարցերի առատ գործածություն, սակայն դատախազի կողմից դրանց գործածությունը գերազանցում է պաշտպանի ցուցանիշները. հազար բառի հաշվարկով՝ 8,75 և 7,04 անգամ՝ 4,39-ի և 4,96-ի դիմաց համապատասխանաբար: Սա մեզ բերում է այն համոզման, որ երրորդ դեմքով ներկայացվող շարադրանքից ուղղակի խոսքի անցնելը դեպքերը տեղափոխում է ներկա պահ և երդվյալ ատենակալներին ստիպում իրենց ներգրավված զգալ գործի մեջ, կարծես անուղղակիորեն ներկա:

2.5. «Դեպքերի համեմատական արդյունքներ» ենթազիլի վերնագիրը պետք է հասկանալ սահմանափակ իմաստով, քանի որ այստեղ համեմատությունը կատարված է երկու հատկանիշով՝ հռետորական/հիպոֆորիկ հարցերի և ուղղակի խոսքի գործածության առումով, որոնք ուսումնասիրված են չորս դատական գործերի շրջանակում: Սա հնարավորություն է տալիս նրանց միջև եղած տարբերությունները վերագրելու կա՛մ այն դատավարական փուլին, որում ելույթը հնչում է, կա՛մ գործի տեսակին և ունկնդիր լսարանի կազմին:

Նախ կարելի է դիտարկել բացման խոսքերը: Դերեկ Շովինի դատավարությունում ցուցանիշները ցածր են երկու կողմերում էլ. ուղղակի խոսքը և հռետորական/հիպոֆորիկ հարցերը դատախազի ելույթում կազմում են հազար բառի հաշվարկով 1,69 և 0,65 անգամ, իսկ պաշտպանի ելույթում՝ 2,25 և 1,93 անգամ: Այլ պատկեր է ներկայացնում Քվանիշա Ջոնսոնի դատավարությունը, որտեղ դատախազի ելույթում ուղղակի խոսքի գործածությունը կազմում է 14,1, իսկ հռետորական/հիպոֆորիկ հարցերինը՝ 2,3 անգամ, մինչդեռ պաշտպանի ելույթում՝ 16,8 և 2,4 անգամ համապատասխանաբար: Երկու դատավարություններում կողմերի կիրառած ուղղակի խոսքի հաճախականության տարբերությունն, ըստ այս հաշվարկի, ամենամեծն է. Ֆ. Շահն այն գործածել է 8,3 անգամ ավելի հաճախ, քան Ջ. Բլեքուելը, իսկ Մ. Սթերլինգը՝ 7,47 անգամ ավելի հաճախ, քան Է. Նելսոնը: Համեմատությունը վավեր է, սակայն երկու գործերի բնույթը նույնը չէ. մեկը՝ ինքնապաշտպանության պնդում է, մյուսը՝ ոստիկանական դաժանության ենթադրյալ դեպք, որտեղ զգալի դեր են խաղում հանգամանքներն ու գործի տեսակը: Դերեկ Շովինի դատավարությունում սպանության պատճառը կախված է ոստիկանի կիրառած ուժի

չափի ողջամտությունից: Քվանիշա Չոնսոնի գործում պատումը պտտվում է մեղադրյալի դիտավորության՝ տուժողին սպանելու նրա մտադրության շուրջ: Երկու վարույթներին ընդհանուր է դրանց հուզական ծանրությունը, քանի որ երկուսում էլ եղել են մարդկային կյանքի կորուստներ:

Եզրափակիչ ելույթներում խնդիրը փոխվում է, քանի որ յուրաքանչյուր կողմ պետք է ապացուցի իր դիրքորոշումը՝ փաստարկելով, թե ինչու հենց իր ներկայացրած փաստերն են ճշգրիտ: Դատախազներից Ջ. Սկալոն գործածում է հռետորական/հիպոֆորիկ հարցեր՝ հազար բառի հաշվարկով 10,1, ուղղակի խոսք՝ 4,6 անգամ, մինչդեռ Ս. Օ'Դոնելի խոսքում հռետորական/հիպոֆորիկ հարցերը գործածվում են 7,04, իսկ ուղղակի խոսքը 8,75 անգամ: Դատախազի կողմից հռետորական/հիպոֆորիկ հարցերի գործածությունը «Սև կարապ» դատավարությունում 1,43 անգամ ավելի քիչ է, քան Քվանիշա Չոնսոնի դատավարությունում, ինչպես նաև Ջ. Սկալոյի ուղղակի խոսքը 1,9 անգամ ցածր է Ս. Օ'Դոնելի ցուցանիշից: Համանման բաժանում է նկատվում նաև պաշտպանների կողմում: Ն. Թեյլորը հռետորական/հիպոֆորիկ հարցեր է գործածել հազար բառի հաշվարկով 4,96 և ուղղակի խոսք՝ 4,39 անգամ, մինչդեռ Մ. Սթերինգը՝ 4,2 և 9,6 անգամ համապատասխանաբար: Հարկ է հաշվի առնել դատավարական ևս մեկ անհամաչափություն. եզրափակիչ ելույթներում պաշտպաններն ունեն մեկ, մինչդեռ դատախազները՝ երկու եզրափակիչ խոսքի հնարավորություն, որոնցից երկրորդը հակադարձ ելույթն է: Իր հակադարձ ելույթում Ֆ. Շահը գործածել է հռետորական/հիպոֆորիկ հարցեր՝ հազար բառի հաշվարկով 11,2, ուղղակի խոսք՝ 15,3 անգամ, մինչդեռ Ռ. Ֆրիլը՝ համապատասխանաբար 4,95 և 4,61 անգամ: Բացման խոսքերում դատախազներից ակնկալվում է շարադրել, թե ինչ են ցույց տալու ապացույցները, մինչդեռ եզրափակիչ ելույթում պահանջվում է բուն փաստարկումը: Ուստի պատահական չէ, որ կորպուսի ամենաբարձր ցուցանիշը՝ 11,2-ը, հանդիպում է Ֆ. Շահի վերջին հակադարձ ելույթում:

Զորորդ վարույթը էապես տարբերվում է մինչ այժմ քննարկված երեքից: Արդարադատության միջազգային դատարանում ելույթները նախապես կազմվում են գրավոր, հասցեագրված են ոչ թե երդվյալ ատենակալներին, այլ դատավորների կազմին, և սահմանափակված են դատարանի դատավարական ընթացակարգերի շրջանակով: Հռետորական/հիպոֆորիկ հարցերը Է. Մամեդովի ելույթում հազար բառի հաշվարկով կիրառվում են 0,00, իսկ Ե. Կիրակոսյանի ելույթում՝ 0,65 անգամ, որը հավասար է բացման խոսքերում արձանագրված ամենացածր ցուցանիշին կամ դրանից ցածր է և զգալիորեն զիջում է եզրափակիչ ելույթների 4,2-ից 11,2 միջակայքին, մինչդեռ ուղղակի խոսքը՝ 3,43 և 3,91 անգամ, գերազանցում է Դերեկ Շովինի դատավարության երկու բացման խոսքերին՝ զիջելով կորպուսի մնացած բոլոր դատական դեպքերին: Հռետորական/հիպոֆորիկ հարցը, որի գործառնություն է պահել ոչ պրոֆեսիոնալ լսարանի ուշադրությունը և բարձրաձայն մողելավորել նրա դատողությունը, պրոֆեսիոնալ միջավայրում քիչ տեղ ունի, քանի որ, դատարանի կազմը որոշում է կայացնում ըստ իրավական հիմնավորման, և նմանատիպ հարցերը՝ ուղղված դատավորներին, վտանգ ունեն հնչելու թատերականացված և ոչ-փաստարկային:

Եզրակացություն բաժնում ի մի են բերվում ատենախոսության ուսումնասիրության արդյունքները: Մեր կողմից ստացված արդյունքները հաստատում են

հետազոտության վարկածը, ըստ որի իրավական լեզուն դատարանում չի կարող մնալ բացառապես տեխնիկական կամ խիստ պաշտոնական: Այն ներառում է հռետորական, ոճական և հուզական տարրեր՝ պարզություն, մատչելիություն ու համոզական արդյունավետություն ապահովելու համար: Վերլուծությունը ցույց է տալիս, որ փաստարկների կառուցման, ձևակերպման և արտահայտման եղանակով է որոշվում, թե ինչպես է վիճելի հարցը դառնում ընկալման ու գնահատման առումով հասանելի: Այս դիտարկումները հստակորեն ցույց են տալիս, որ իրավական դիսկուրսը չի կարող տարանջատվել այն ձևավորող հռետորական միջոցներից:

Սույն աշխատանքում կատարված վերլուծությունը մեզ հանգեցնում է հետևյալ եզրահանգումներին.

- Երդվյալ ատենակալների մասնակցությամբ իրականացվող դատավարություններում, որտեղ կողմերն իրենց խոսքը, դրա պաշտոնականության աստիճանը և կիրառվող բառապաշարը հարմարեցնում են երդվյալ ատենակալներին դիմելու արդյունավետությանը, ոճական և հռետորական տարրերը կազմում են նրանց ելույթների կենսականորեն կարևոր մասը: Խիստ պաշտոնական լեզվի կիրառումը կարող է խոչընդոտել երդվյալ ատենակալների բոլոր անդամների ըմբռնմանը և արդյունքում խաթարել փաստարկի համոզությունը:
- Արդարադատության միջազգային դատարանում, որտեղ ինստիտուցիոնալ միջավայրը ձևավորվում է պրոֆեսիոնալ դատավորների, նախագահի, պաշտոնատար անձանց և համապատասխան պետությունների ներկայացուցիչների ներկայությամբ, պահպանվում է պաշտոնական ոճը: Այնուամենայնիվ, ոճական երանգավորումն այստեղ չի անհետանում, այլ հուզական բառապաշարի փոխարեն արտահայտվում է անվանակոչման, եղանակավորության և սաստկացման միջոցներով, ընդ որում վերջինը ամենահաճախ կիրառվող միջոցն է երկու ելույթներում էլ:
- Բառապաշարային-իմաստաբանական վերլուծությունն ապացուցում է, որ որոշակի բառերի և բառապաշարի միջոցով կողմերն ընդգծում են իրենց պնդումները, որոշակի ազդեցություն գործում լսարանի վրա, խաթարում հակառակ կողմի փաստարկները կամ կարեկցանք առաջացնում: Բառերի հատուկ ընտրությամբ խոսք են ներմուծվում ենթադրական, գնահատողական և գաղափարական իմաստներ, որոնք որոշակի ազդեցություն են գործում մասնակիցների՝ գործողությունների և իրադարձությունների ընկալման վրա:
- Ձևաբանական-շարահյուսական վերլուծությունը, որը ներառում է ժամանակաձևերի և պարզ, բարդ ստորադասական և բարդ համադասական նախադասությունների ուսումնասիրությունը, ցույց է տալիս, որ կողմերը, մանրամասն տեղեկություններ ներկայացնելիս կամ բարդ փաստարկներ կառուցելիս հաճախ օգտագործում են երկար, պատմողական բնույթի նախադասություններ, որը նրանց թույլ է տալիս անհրաժեշտության դեպքում ապահովել համատեքստ ու անհրաժեշտ նրբերանգներ: Ի տարբերություն դրա, կարճ և պարզ նախադասությունները ռազմավարական առումով կիրառվում են

կարևոր կետերի վրա ուշադրություն հրավիրելու և ընդհանուր դիսկուրսի շրջանակներում դրանց նշանակությունն ու հրատապությունն ընդգծելու նպատակով: Նախադասության կառուցվածքի այսպիսի փոփոխականությունը վկայում է կանխամտածված հռետորական ռազմավարության մասին, որի միջոցով շարահյուսական ընտրություններն օգտագործվում են տեղեկատվական հոսքը կառավարելու, դատավորի և երդվյալ ատենակալների ներգրավվածությունը պահպանելու և փաստարկի առավել կարևոր տարրերն ընդգծելու համար: Ավելին՝ նման օրինաչափությունները ի ցույց են դնում, թե ինչպես են իրավական դիսկուրսում հավասարակշռվում ճշգրտության անհրաժեշտությունը և համոզիչ ազդեցությունը՝ ապահովելով ոչ միայն էական փաստերի հստակ հաղորդում, այլև հուզական արձագանքի առաջացում լսարանում:

- Լեզվառական ուսումնասիրությունը հաստատում է այն վարկածը, որ թեև իրավական դիսկուրսը բնութագրվում է իր մասնագիտացված բառապաշարով, պաշտոնական լեզվաոճով և խիստ իրավական բնույթով, այդ առանձնահատկությունները չեն կարող պահպանվել ելույթների ընթացքում՝ առանց հռետորական և ոճական միջոցների ներառման: Կողմերի նման հնարների, այդ թվում նաև կրկնության տարբեր տեսակների նկատելի կիրառությունը, առանձնակի հաճախությամբ հանդիպում է բոլոր դատական գործերում:
- Կրկնությունը կողմերի ելույթներում հանդես է գալիս որպես առանցքային սկզբունք, քանի որ այն հնարավորություն է տալիս շարունակաբար ուղղորդելու երդվյալ ատենակալների կամ դատավորի ուշադրությունը գործի այն տարրերի վրա, որոնց նշանակությունը մեծ է փաստարկային նպատակների իրականացման համար:
- Ուղղակի և անուղղակի խոսքի կիրառումը ցույց է տալիս, որ շատ կարևոր է պատմողական շարադրանքի երրորդ դեմքից առաջին դեմքի անցումը՝ երբեմն ուղղակի մեջբերման կամ պատկերավոր ուղղակի խոսքի միջոցով, երդվյալ ատենակալների ուշադրությունը, կենտրոնացումը և ներգրավվածությունը պահպանելու համար:
- Հռետորական հարցերն օգտագործվում են կողմերի նույն գաղափարախոսությունը երդվյալ ատենակալներին ներշնչելու և որևէ տեսակետ ապացուցելու նպատակով: Դրանք օգնում են երդվյալ ատենակալներին կենտրոնանալ գործի այս կամ այն կոնկրետ հանգամանքի վրա: Հռետորական հարցի դեպքում պատասխանը թողնվում է լսարանի ենթադրությանը, մինչդեռ հիպոֆորային հաջորդում է խոստդի կողմից տրված հստակ պատասխանը՝ դրանով իսկ կանխորոշելով մեկնաբանությունը և այն չթողնելով երդվյալ ատենակալների հայեցողությանը:
- Զանակական վերլուծությունը լրացուցիչ հաստատում է, որ դատական դիսկուրսը գործում է որպես խնամքով կառուցված հռետորական տարածք, որտեղ լեզվական ռազմավարությունները ձևավորում են փաստարկման ուժն ու մեկնաբանական ուղղվածությունը: Կողմերը համակարգված կերպով կիրառում

են կրկնությունը, ուղղակի մեջբերումը, հռետորական/հիպոֆորիկ հարցադրումները որպես շեշտադրման, գնահատման և լսարանի ներգրավման մեխանիզմներ: Այս միջոցները ոչ միայն ոճական զարդարանքներ են, այլ նաև՝ համոզման գործիքներ, որոնք նախատեսված են ընկալումը ձևավորելու և երդվյալ ատենակալների դատողությունները որոշակիորեն ուղղորդելու համար:

- Բոլոր չորս դատավարություններում միևնույն սկզբունքով հաշվարկված հռետորական միջոցներն առավել հստակորեն են ցույց տալիս դատական տարբեր միջավայրերի և ժանրերի միջև առկա տարբերությունը: Երդվյալ ատենակալների առջև ներկայացված ելույթներում հռետորական հարցերի և հիպոֆորայի կիրառումը ցույց է տալիս, որ բացման խոսքերում կարևոր է պահպանել պատմողական բնույթը՝ դրանք չվերածելով փաստարկման, մինչդեռ եզրափակիչ ելույթներում դատողությունն ու փաստարկումը արդյունավետորեն ներկայացնելով որպես վերջնական խոսք: Միջազգային դատարանում այս միջոցների սահմանափակ կիրառությունը պայմանավորված է դատական գործի ժանրով, նյութի ներկայացման ձևով և լսարանի կազմով:

Ամփոփելով կարելի է ասել, որ հետազոտության նպատակները համակարգված կերպով իրագործվել են իրավական խոսույթի և խոսքի ճարտասանության համապարփակ տեսական և էմպիրիկ ուսումնասիրության միջոցով:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Discourse at the Crossroads of Language and Law // Armenian Folia Anglistika, Vol. 19, Issue 2 (28), Yerevan, 2023, pp. 13-30 (co-author - S. Gasparyan).
2. Derek Chauvin's Trial: A Linguistic and Rhetorical Analysis of the Court Case // FLHE, Vol. 28, Issue 1 (36), Yerevan, 2024, pp. 24-42.
3. Artsakh: Discourse Study of the Case Against Discrimination // Armenian Folia Anglistika, Vol. 20, Issue 2 (30), Yerevan, 2024, էջ 57-70 (co-author - S. Gasparyan).
4. Linguistic Properties of Lawyers' Speech: A Case Study // Armenian Folia Anglistika, Vol. 21, Issue 1 (31), Yerevan, 2025, pp. 53-74.
5. Linguistic Strategies And Persuasive Argumentation In "Black Swan" Trial: A Case Study // ՎԷՄ համահայկական հանդես, 4(92), Երևան, 2025, էջ 169-194:
6. Rhetoric as a Tool of Legal Argumentation // FLSP, Vol. 25 Yerevan 2025, pp. 93-113 (co-author - S. Gasparyan).

ЗАРА АЙРАПЕТЯН

ЯЗЫК КАК КЛЮЧ К ПОНИМАНИЮ ЮРИДИЧЕСКОГО ДИСКУРСА

Резюме

Целью настоящего исследования является выявление лингвистических и риторических свойств, используемых прокурорами и адвокатами защиты (далее – адвокаты) в судебных речах, а также рассмотрение того, каким образом эти особенности и заложенный в них потенциал задействуются в попытке склонить присяжных на свою сторону. Посредством анализа языка в его функционировании в работе устанавливается, как адвокаты конструируют убеждающий дискурс, способный воздействовать на судей и присяжных в контексте конкретных дел. Поскольку присяжные являются неспециалистами, чьи решения могут формироваться не только фактическими доказательствами, но и эмоционально-риторическим воздействием, особое внимание уделяется стратегиям убеждения, адресованным именно им. Вместе с тем в исследовании рассматриваются и судебные процессы, проходящие без участия присяжных, что позволяет получить сопоставительную перспективу и увидеть, как риторические и языковые решения действуют в строго профессиональной судебной среде. Поскольку решения суда способны существенно изменить жизнь подсудимого, необходимо исследовать, каким образом манера произнесения речи и её языковая организация влияют на общее воздействие юридической аргументации. Цель исследования достигается посредством решения следующих **задач**:

- обобщить современные теоретические подходы к изучению юридического дискурса и риторики убеждения и на их основе разработать аналитическую модель, позволяющую выделить и разграничить структурные компоненты судебных речей адвокатов;
- исследовать речь адвокатов в рамках многоуровневого лингвистического анализа, описав его морфолого-синтаксические, стилистические и риторические особенности, что позволит выявить механизмы функционирования выразительных средств в юридической аргументации;
- установить частотность и распределение выявленных риторических и стилистических приёмов в речах состоящих сторон, что даст возможность провести сравнительный анализ на материале различных судебных дел;
- оценить влияние аудитории и институционального контекста на процесс убеждения в суде путём сопоставления риторических и языковых стратегий адвокатов в выступлениях перед присяжными заседателями и перед профессиональными судьями.

Актуальность настоящего исследования обусловлена тем, что показатели преступности не снижаются, что неизбежно ведёт к большому числу обвинительных приговоров, как обоснованных, так и ошибочных. Настоящая работа не рассматривает ошибочные приговоры как таковые; она исследует, как адвокаты строят свою аргументацию, что является одним из условий, при которых выносится любой вердикт. В этой связи важно изучить язык, используемый адвокатами в зале суда – как при поддержке позиции своего клиента, так и при оспаривании позиции противоположной стороны, – и выяснить, каким образом обеспечивается его реализация для достижения большего воздействия.

Научная новизна исследования заключается в соединении зарубежных научных разработок в области юридического убеждения с оригинальным трёхчастным методологическим подходом – сопоставительным корпусом современных англоязычных судебных речей, в котором речи двух противостоящих сторон каждого процесса сопоставляются друг с другом; анализом дела, связанного с армянским контекстом и рассмотренного в Международном Суде ООН; единым риторико-лингвистическим аналитическим подходом. Таким образом, исследование направлено на установление того, какие языковые и риторические средства задействуются в этих речах и как две противостоящие стороны каждого процесса конструируют конкурирующие версии одной и той же совокупности фактов.

Теоретическая значимость исследования определяется тем, что его результаты позволяют обратиться к теоретическим основаниям изучения юридического дискурса, ораторского искусства и лингвистики. Полученные результаты могут также представлять интерес с точки зрения переосмысления имеющихся данных и выводов в исследованиях в рамках названных дисциплин.

Практическая значимость исследования подчёркивается тем, что его результаты могут применяться специалистами в области анализа юридического дискурса и юридической коммуникации, а также использоваться в теоретических и практических курсах по юридической риторике, языку судопроизводства и убеждающей коммуникации. Полученные результаты могут способствовать дальнейшим разработкам в будущих диссертационных исследованиях, магистерских и дипломных работах и могут быть включены в практические курсы юридических дисциплин.

Методология исследования основана на комплексном применении ряда качественных подходов, включая лексико-семантический, лингвистический, морфо-синтаксический, риторический и дискурсивный анализ. Языковые стратегии, применяемые в судебных речах, а также убеждающая аргументация дополнительно изучались с привлечением количественного подхода. Лексические единицы, подсчитываемые в каждом деле, выявляются на материале объединённого корпуса речей обеих сторон, а не корпуса каждой из сторон в отдельности, так что различия, отражённые в

таблицах, являются результатом анализа, а не следствием способа отбора слов. Поскольку оспариваемые факты различаются от процесса к процессу, лексические показатели специфичны для каждого дела и, соответственно, сопоставляются внутри каждого дела, где две речи посвящены одним и тем же событиям и произносятся в одной и той же судебной инстанции. Два показателя имеют не лексическую, а структурную природу – это прямая речь и риторические вопросы/типофора; поскольку они подсчитываются на одинаковых основаниях во всех четырёх процессах, они сопоставляются и между делами при условии, что друг с другом сопоставляются речи одного типа. Рассмотрение дела в международном суде отличается от внутригосударственных процессов не только составом аудитории, но и способом подачи выступлений, жанром и ролью говорящего.

Область нашего исследования охватывает следующие дисциплины: дискурсивный анализ, стилистику, юридический дискурс, риторику.

Материалом исследования послужили реальные уголовные дела, рассмотренные судами США, а также дело, рассматривавшееся в Международном Суде ООН; и то и другое составляет основу всего последующего анализа.

Гипотеза исследования состоит в следующем: хотя юридический дискурс принято описывать как формальный, безличный и эмоционально нейтральный, это описание не применимо к судебной речи адвокатов, в которой стилистически окрашенный язык является постоянной характеристикой. Такая риторико-стилистическая окрашенность не устраняется ни формальностью обстановки, ни профессиональным характером аудитории. Когда представители обращаются к судьям, а не к присяжным, окрашенность становится слабой и реализуется иными средствами – посредством номинации, модальности и интенсификации, а не эмотивной лексики.

ZARA HAYRAPETYAN
LANGUAGE AS A KEY TO UNDERSTANDING LEGAL DISCOURSE

Summary

The **aim** of this research is to identify the linguistic and rhetorical properties employed in prosecutors' and defense lawyers' (further referred to as attorneys) courtroom speeches and to examine how these features with their potential are deployed in the attempt to gain juries' side. Through the analysis of language in use, the study seeks to determine how attorneys construct persuasive discourse skillfully capable of affecting judges and juries in the context of specific cases. Given that jury members are laymen whose decisions may be shaped not only by factual evidence but also by emotional and rhetorical appeal, particular attention is paid to the persuasive strategies directed toward them. At the same time, the research also considers court proceedings conducted with professional judges allowing for a comparative perspective on how rhetorical and linguistic choices operate within a strictly judicial setting. Since court decisions may significantly alter the defendant's life, it is essential to examine how speech delivery and linguistic structuring contribute to the overall impact of legal argumentation. The aim of the research is accomplished through a thorough examination of the following research **objectives**:

- to synthesize contemporary theoretical approaches to legal discourse and persuasive rhetoric, establishing a framework to delineate the structural components of attorneys' courtroom speeches.
- to investigate attorneys' speeches through a multi-level linguistic framework, mapping its morpho-syntactic, stylistic, and rhetorical properties to reveal how expressive devices operate in legal argumentation.
- to map the frequency and distribution of identified rhetorical and stylistic devices across opposing trial speeches, enabling a cross-case comparative analysis.
- to evaluate how audience and institutional setting influence legal persuasion by comparing attorneys' rhetorical and linguistic strategies before lay juries versus professional judges.

This study is highly **relevant** because daily crime rates remain unabated, inevitably leading to a high volume of convictions – both just and wrongful. The present study does not address wrongful conviction as such; it examines how attorneys build their arguments, which is one of the conditions under which any verdict is reached. In this regard, it is important to study the language used by attorneys in the courtroom, whether supporting their client or opposing the other party, and to explore the way the implementation is provided for a better impact.

This research establishes its **novelty** by bridging international scholarship on legal persuasion with a unique, tripartite methodological approach – a comparative corpus of contemporary English trial speeches in which the two opposing parties of each proceeding are compared with each other; an analysis of an Armenian-context case before the International

Court of Justice; a unified rhetorical and linguo-stylistic framework. The study thus seeks to establish which linguistic and rhetorical means are deployed in these speeches, and how the two opposing parties in each proceeding construct competing accounts of one and the same body of facts.

The research is of **theoretical significance** since its outcomes can enable us to refer to the theoretical framework of the legal discourse study, oratory, and linguistics. The results may also be of interest for reconsidering the gained data and findings in investigations of the abovementioned disciplines.

The **practical value** of the research is underscored by the fact that the findings of this study can be applied by specialists in legal discourse analysis, and legal communication, as well as utilized in theoretical and practical courses on legal rhetoric, courtroom language, and persuasive communication. The results obtained can also contribute to further development in future PhD research, MA theses, and diploma papers, and can be integrated into practical legal studies courses.

The **methodology** of this research is based on the use of the combined employment of a variety of qualitative approaches, including lexico-semantic, linguo-stylistic, morpho-syntactic, rhetorical and discourse analyses. The linguistic strategies applied in courtroom speeches and the persuasive argumentations have additionally been studied through the implementation of quantitative approach. The lexical items counted in each case are identified from the combined corpus of both parties' speeches rather than from either party's separately, so that the differences shown in the tables are results of the analysis and not consequences of the way the words are chosen. Since the contested facts differ from one proceeding to another, the lexical measures are case-specific and are accordingly compared within each case, where the two speeches address the same events before the same tribunal, and not across cases. Two of the measures are structural rather than lexical, namely direct speech and rhetorical questions/hypophora, and since they are counted on the same basis in all four proceedings they are compared across the cases as well, provided that speeches of the same type are set against one another. The the International Court proceedings differ from the domestic trials not only in the composition of the audience but also in the mode of delivery, the genre and the role of the speaker.

The area of our investigation comprises the list of the following disciplines: discourse analysis, stylistics, legal discourse, rhetoric.

The **data for this research** is drawn from actual US criminal court cases and a case argued before the International Court of Justice, both of which provide the foundation for all subsequent analyses.

The **hypothesis** of the research is: although legal discourse is conventionally described as formal, impersonal and emotionally neutral, this description does not hold for attorneys' courtroom speech, in which stylistically colored language is a constant feature. Such rhetorical and stylistic coloring is not eliminated by the formality of the setting or by the professional character of the audience. When representatives address judges rather than a jury, it becomes less dense and is realized by different means: by naming, modality and intensification rather than by emotive lexis.

